ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 12

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2021Թ.-Ի ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Բյուրավան համայնքի ավագանու 2021թ. հունիսի 7-ի թիվ 5 նիստի օրակարգը՝

1. Արարատի մարզի Բյուրավան համայնքում 2021 թվականին ստեղծված նորատունկ այգիների համար արտոնություններ սահմանելու մասին
2. Արարատի մարզի Բյուրավան համայնքի Քաղաքաշինության Կանոնադրությունը հաստատելու մասին
3. Արարատի մարզի Բյուրավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման,կառուցապատման իրավունքով հողամասի մրցույթային կարգով վարձակալության տրամադրելու մասին
4. Արարատի մարզի Բյուրավան համայնքի համայնքային գրադարանի գրքերը Բյուրավանի միջնակարգ դպրոցի գրադարանին անհատույց օգտագործման տրամադրելու մասին
5. Արարատի մարզի Բյուրավան համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն կատարելու մասին

6. Արարատի մարզի Բյուրավան համայնքում հողամասերի աճուրդային եղանակով օտարում կազմակերպելու, օտարվող հողամասերի մեկնարկային գինը սահմանելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 13

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հողի հարկի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

Արարատի մարզի Բյուրավան համայնքի 2021թվականին նորատունկ այգի հիմնած ներքոհիշյալ հողի սեփականատերերին տալ արտոնություն հողի հարկից 100% ազատվելու ձևով:

1. Գևորգյան Մնացական -0.235 հա պտղատու այգի /դեղձ/ - մինչև 2025թ.
2. Վարդանյան Վահագն - 0.14 հա պտղատու այգի /դեղձ / -մինչև 2025թ
3. Մարգարյան Նունե - 0.45 հա պտղատու այգի /ծիրան / - մինչև 2026թ.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 14

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 30 -րդ կետի պահանջներով՝ Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Արարատի մարզի Բյուրավան համայնքի Քաղաքաշինության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի
Բյուրավան համայնքի ավագանու
թիվ 5 նիստի, թիվ 14 որոշմամբ
07.06.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բյուրավան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի ,լրացուցիչ պայմանները բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը: Բյուրավան համայնքի կենտրոնում վեր է խոյանում վարդագույն տուֆ սրբատաշ քարով կառուցված երկհարկանի մշակույթի տունը՝ կամարաձև պատուհաններով , քանդակազարդ ճակատով և մուտքի չորս հզոր սրբատաշ սյուներով , որոնք կամարներով միանալով միմյանց և ընդհանուր շենքին ուրույն ճարտարապետական լուծումով մեծ տպավորություն են թողնում: Մշակույթի տունը կառուցված է 1950-ական թվականներին:Բյուրավան համայնքի տարածքում 1950-1980 ական թվականներին կառուցված բնակելի տները հիմնականում կառուցված են վարդագույն և ծիրանագույն տուֆ քարով, տանիքները՝ արծաթագույն,ասբեստի շիֆերով : Միայն 2010 թվականից

մինչև այժմ համայնքի մի շարք բնակելի տների տանիքները վերանորոգվել և շիֆրերը փոխարինվել են հիմնականում արծաթագույն մետաղական ծածկով:

2.2.Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:Բյուրավան համայնքում լիովին վերանորոգվել , օծվել և այժմ գործում է հիմնովի ավերված 1830թվականին հիմնադրված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին , որի մուտքի աջ կողմում պատի մեջ տեղադրված է 13-14 դարերի խաչքար, որը ներառված է ՀՀ Պատմամշակույթային հուշարձանների շարքում:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորում

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (,հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջներ

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ:

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 15

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ,ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և << Հողային օրենսգրքի >> 76-րդ հոդվածի պահանջներով Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Բյուրավան համայնքի Վ.Մամիկոնյան փող. թիվ 2/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման, կառուցապատման իրավունքով 84քմ մակերեսով հողամասը / ծածկագիր՝ 03-026- 0055-0014/ 90 /իննսուն / տարով մրցույթային կարգով վարձակալության տրամադրելու:
2.Վարձակալական վճարը հաշվարկել կադաստրային արժեքի 10%-ի չափով՝ 84քմ x 1221դրամ = 102564 դրամ, որի 10%-ը կկազմի՝ 10256,4 դրամ /տաս հազար երկու հարյուր հիսունվեց դրամ 40 լումա / :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 16

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԸ ԲՅՈՒՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

Արարատի մարզի Բյուրավան համայնքի համայնքային գրադարանի 5320 կտոր գրականությունը անորոշ ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել Բյուրավանի միջնակարգ դպրոցին :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 17

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29) և 31) կետերի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 –Ա որոշմամբ ստեղծված, ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ներկայացված 31.05.2021թվականի թիվ 2/փ-165 դրական եզրակացությունը՝ Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Արարատի մարզի Բյուրավան համայնքի գլխավոր հատակագծում համայնքային սեփականություն հանդիսացող 03-026-0174-0027 կադաստրային ծածկագրով 0,00899հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել ,և դասել արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր հողատեսքի:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին նշված փոփոխություններն արտացոլել

համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ապահովել Բյուրավան համայնքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բյուրավան համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բյուրավան, (093) 23-28-55, byuravanigyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 18

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ,ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 21-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 67 հոդվածի դրույթներով՝ Բյուրավան համայնքի ավագանին

որոշում է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ վաճառքի կարգով Բյուրավան համայնքի պահուստային հողերից օտարելու հետևյալ գյուղ նշանակության հողամասերը՝

1. 0,41810 հա գյուղ նշանակության վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 03-026-0107-0006,
2. 0.39620 հա գյուղ նշանակության վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 03-026-0107-0004
3. 0.42710 հա գյուղ նշանակության վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 03-026- 0107-0005

2.Օտարվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ

ԼԵՎՈՆՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԵՂԱՄ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**